

բարերարին, ի հայր. Կիլիկեցոց տէր Մինասին, և ի յառաջ. Ս. Յակոբայ առաքելոյս. տէր Գրիգոր արշիեպիսկոպոսին. . . յիշեսցիք ի սրբամատոյց յաղօթս ձեր զվերջին աշխատողս ի մտա Մաղաքիա սպասաւոր բանին, և զառածեալս ի մեզս՝ թողու թիւնս խնդրեցէք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. . .» (Էջմ. Յուց. Թ. 1692, նաև Անեցի. էջ ԺԶ—ԺԸ): Այս ձեռագիրը կը պարունակէ նաև Սամուէլ քհ. ի Անեցոյ պատմութիւնը: Մաղաքիա կրօնաւորի ընդօրինակածին վրայէն գաղափարող գրիչը կ'ըսէ. «գրեցաւ այս գաւազանագիրքս ձեռամբ մեղաւոր եւ անարժան ներսէս սարկաւազի որդւոյ Հօլուպվոյթին Կամէնցեոյ. ի յաշխարհս Իլախաց ի նոյն քաղաքի. ի վայելումն հոգևոր հօրն մերոյ սրբասնեալ և քաջ ռաբ. . .» (կտրուած):

ՄԱՂԱՔԻԱ ՊԿ. ՕՐՄԱՆԵԱՆ, ՊՈՂՍԵՅԻ.— Ծ. 1841. Փետր. 11. 1851 Մայիս 25 ին կը մտնէ Անտոնեան Միաբանութեան վանքը (Հոռով): 1858 Յունիս 12 ին կրօնաւորական սքեմ կ'առնէ և կը հետևի Ս. Ապողինար Համալսարանի դասընթացքին: 1860 Օգոստ. 31 Տոքթ. փիլիսոփայութեան: 1863 Օգոստ. 12 ին քահանայ կը ձեռնադրուի Հիւրմիւզեան եղբարդ արքեպիսկոպոսի ձեռքով: 1865 Մայիս 27 ին հրապարակային վիճարանութիւն կ'ունենայ Աստուածաբանական ուսմանց համար եւ Օգոստ. 24 ին կ'ըլլայ Տոքթ. Աստուածաբանութեան. 1868 Օգոստ. 20 ին Տոքթ. եկեղեցական իրաւագիտութեան, և կ'անդամակցի Հոռովի կաճառին: 1869 ին կը մասնակցի Հոռովմէական Հայոց Սինհոգոսին (Կ. Պոլիս): 1870 ին եկեղեցական խնդրով հինգ տարի Հոռովի մէջ կ'գրադի, ետքը Պոլսի մէջ մինչև 1879: 1879 Հոկտ. 28 ին, ներսէս պարք. ի օրով 75 ծանօթ երեւելի հայ հոռովականներու հետ (45 այրեր և 30 տիկիններ) մայրենի եկեղեցիին գիրկը դառնալով՝ ծայրագոյն վարդապետի աստիճանը կ'ընդունի նոյն պատրիարքէն: Հոկտ. 31 ին քարոզիչ Ս. Լուսաւորիչ եկեղեցոյ (Ղալաթիա): 1880 Ապրիլ 2 ին առաջնորդ Կարնոյ, 1886 Յունիս 8 ին եպիսկոպոս կը ձեռնադրուի Ս. Էջմիածնի մէջ Մակար կթղ. էն: 1887 ին ուսուցիչ աստուածաբանութեան Գէորգեան ձեմարանին մէջ: 1888 ին կը դառնայ Կ. Պոլիս՝ և քարոզիչ ըլլալով Գարակէօմրիւկի՝ կը նախագահէ եկեղեցական վարժարանի Յանձնաժողովին: 1889 Սեպտ. 18 ին բացումն եկեղեցական վարժարանի (= Արմաշու